«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի

ՈՐՈՇՈՒՄ

1 Հուլիսի 2022, N 13 - 11

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում գործող մարզական խմբակների և հատուկ բժշկական խմբերի կազմի վերանայման և մարզական խմբակների մարզիչների բեռնվածության հաշվարկման նորմատիվներ սահմանելու մասին

Լսելով և քննարկելով 2011-2012 ուսումնական տարվանից Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում գործող 15 մարզական խմբակների (որից սեղանի թենիսի՝ 2, վոլեյբոլի՝ 2, բասկետբոլի՝ 2, ֆուտզալի, բադմինթոնի, աթլետիկայի, թեքբոլի, շախմատի, հրաձգության, մենամարտի, բազկամարտի և աէրոբիկայի՝ 1-ական) և հատուկ բժշկական խմբերի կազմի վերանայման և մարզական խմբակների մարզիչների բեռնվածության հաշվարկման նորմատիվներ սահմանելու մասին հարցը, **հաշվի առնելով,** որ «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածով նախատեսված են ուսումնառության ընթացքում անհատին ֆիզիկական կուլտուրայով զբաղվելու հնարավորության ընձեռնման պետական երաշխիքներ, իսկ «Մանկապատանեկան սպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ կետով բարձրագույն ուսումնական հաստատություններում «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի դասերի անցկացման համար պարտադիր նվազագույն ժամ սահմանված է շաբաթական 4 ժամը, սակայն առարկայի դասավանդումը (մինչև 3 տարի տևողությամբ) համարվում է հաստատության հայեցողությունը, որի շրջանակներում «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպությունը «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի դասավանդումն իրականացնում է 2 տարի տևողությամբ (շաբաթական 4 ժամով), **արձանագրելով,** որ բարձր կուրսերի ուսանողների համար ձևավորված մարզական խմբակներ և հատուկ բժշկական խմբեր հաճախող ուսանողների թիվն էականորեն կրճատվել է (համապատասխանաբար՝ 245 և 60 ուսանող) և համալսարանի ֆիզդաստիարակության, արտակարգ իրավիճակների և քաղաքաշտպանության ամբիոնի համար 2011 թվականին սահմանված ժամային նորմատիվները (1 խմբակի համար 204 ժամ) կորցրել են իրենց նպատակահարմարությունը, միևնույն ժամանակ **կարևորելով** բակալավրի կրթական ծրագրերի բարձր կուրսերի ուսանողների և մագիստրոսի կրթական ծրագրերի ուսանողների ֆիզիկական դաստիարակության անընդհատականության ապահովման, «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածով սահմանված երաշխիքների տրամադրման և «Մանկապատանեկան սպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջների ապահովման

անհրաժեշտությունը՝ «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդը **որոշում է.**

1. Կրճատել համալսարանի մարզական 1 խմբակի ժամային նորմատիվը (204 ժամ)՝ սահմանելով՝ 128 ժամ:
2. Հատուկ բժշկական խմբի ժամային նորմատիվը թողնել անփոփոխ՝ սահմանելով 64 ժամ:
3. 2022-2023 ուսումնական տարում համալսարանում ձևավորել 2 հատուկ բժշկական խումբ և համալսարանի ֆիզդաստիարակության, արտակարգ իրավիճակների և քաղպաշտպանության ամբիոնին հատկացնել 128 ժամ տվյալ խմբերում պարապմունքները կազմակերպելու համար:
4. 2022-2023 ուսումնական տարում համալսարանում ձևավորել սեղանի թենիսի՝ 1 վոլեյբոլի՝ 2, բասկետբոլի՝ 2, ֆուտզալի, ուժային պատրաստության և բազկամարտի, բադմինթոնի և թեքբոլի, հրաձգության՝ 1-ական խմբակներ:
5. 2022-2023 ուսումնական տարում համալսարանի ֆիզդաստիարակության, արտակարգ իրավիճակների և քաղպաշտպանության ամբիոնին հատկացնել 1152 ժամ մարզական խմբակների մարզիչներին տրամադրելու նպատակով:
6. Հանձնարարել համալսարանի ուսումնական բաժնին՝ UMS հարթակում ձևավորել 2 հատուկ բժշկական խմբեր (64-ական ժամով) և 9 մարզական խմբակներ (128-ական ժամով):
7. Հանձնարարել համալսարանի ֆիզդաստիարակության, արտակարգ իրավիճակների և քաղպաշտպանության ամբիոնին՝
   1) իրականացնել մարզական խմբակներ հաճախող ուսանողների հստակ հաշվառում և տրամադրել մարզական խմբակների պարապմունքների անցկացման ժամանակացույց և տարեկան օրացուցային պլան,
   2) մինչև 2022-2023 ուսումնական տարվա ավարտը մշակել և ներկայացնել 2024-2025 թվականին մարզական խմբակների ձևավորման և ժամային բեռնվածության նորմատիվների սահմանման և ֆիզիկական կուլտուրայի դասերի շրջանակներում դրանց գործունեության կազմակերպման հայեցակարգ:
8. Սույն որոշման նկատմամբ վերահսկողությունը վերապահել ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ա.Վ.Գրիգորյանին:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Դիանա Գալոյան**

2022 թ. հուլիսի 1
Երևան